181 Պատգամ ունենք վերից եկած՝ ներենք իրար,

1. Պատգամ ունենք վերից եկած՝ ներենք իրար,
Ինչ էլ լինի՝ թե՛ խինդ, թե՛ լաց՝ ներենք իրար,
Ուժ ամբարենք մեր օրերում՝ հոգին ներման,
Ե՛կ, իմ եղբայր և իմ քույրիկ, ներենք իրար:

2. Պատգամ ունենք վերից եկած՝ պատվենք իրար,
Ինչ էլ լինի՝ թե խինդ, թե լաց՝ պատվենք իրար,
Ուժ ամբարենք մեր օրերում՝ լցվենք Հոգով,
Ե՛կ, իմ եղբայր և իմ քույրիկ, պատվենք իրար:

3. Պատգամ ունենք երկնից եկած՝ սիրենք իրար,
Ինչ էլ լինի՝ թե խինդ, թե լաց՝ սիրենք իրար,
Ուժ ամբարենք մեր օրերում՝ Հոգին սիրո,
Ե՛կ, իմ եղբայր և իմ քույրիկ, սիրենք իրար: